Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԱՐԿ ԲՕՅԱՐԻՍ

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻՆ

9(495)
Ե-45

ԵՐԵՎԱՆԻ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆ

1904. ԹՎԱԿԱՆ

ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

„ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ"

(L'ARMÉNIE ET LA QUESTION ARMÉNIENNE)

ՄԵԾ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ

ԲԱՂԿԱՑԱԾ ՄՕՏ 1000 ԵՐԵՍԻՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՆՇԱՆԱՒՈՐ ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԻ

Հրատարակութիւն

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

(Ծրագիրը տպուած է առանձին)

(495)
Г-45
5 OCT 2011

ՄԱՐԿ ԲՕՅԱՐԻՍ

ԵՄԵՆԻՑԻ

Ֆրանսերէնից թարգմանեց Գ. Ա.

15159
728
ՀԱՅ. Հ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հրատարակութիւն

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԺԸՆԵՒ

1904

05 APR 2013

17718

I

Մարկ Բօցարիսի անունը այն անուններից է, որ յոյները մեծ հպարտութեամբ են արտասանում։ Նա այն Կիցոս Բօցարիսի որդին էր, որի հանդէս գալը դիտեցին Սուլիի առաջին պատերազմի միջոցին։ Բօցարիս ծնուեց 1788 թուին և իր պատանեկութեան մի մասը անցկացրեց Վուրգարելիում։ Սուլիացիների 1803 թուի պարտութիւնից յետոյ Կիցոս ի զուր աշխատեց փրկել իր մօտ ապաստանածներին։ Եանինայի փաշայի կատաղի աւազակախմբերից պաշարուած, փակուած մի քանի հարիւր զինուորներով, կանանցով և երեխաներով մի վանքի մէջ, նա երկար շաբաթների ընթացքում դէմ դրեց հինգ-վեց հազար ալբանացիների յարձակումներին։ Մարկ Բօցարիս այս պաշարման միջոցին զինավարժութեան փառաւոր դասեր առաւ. բայց վանքը գրաւուեց, և նրա պաշտպաններին սրի տուին։ Կիցոսը, Մարկը, մի քաջ կին, որի անունը անյայտ է պատմութեան, աջողեցրին իրանց փախուստը մենակ, զէնքը ձեռքերին և թիւրքերի միջով կարողացան հասնել Պարգա։

Մարկ Բօցարիս գնաց Ֆրանսիա և զօրքի մէջ ծառայութեան մտաւ։ Մի քանի տարուց յետոյ նա գնաց Կորֆու և սուլիացիներից մի բատալիօն կազմեց, որի կազմակերպութիւնն ու հրամանատարութիւնը կայսերական կառավարութիւնը նրան էր յանձնել։

Կոլոկոտրօնի պատմում է, որ հանդիպեց Բօցարիսին 1814 թուին, այն րոպէին, երբ կռիւ էր ծագում Ֆրանսիացիների և անգլիացիների միջև։ Նա վերջիններիս ծառայութեան մէջ էր։ Սուլիացիներին նկատելով, հեռուից յանդիմանական խօսքեր ուղղեց նրանց պետին, որին նա դեռ չէր ճանաչում և հրաւիրեց միանալ

իրան։ Բօցարիս Նրան պատասխանեց. „ինչպէ՞ս ես ուզում, որ ես դաւաճանեմ այն գործին, որին երդւել եմ ծառայել. թող մեզանից իւրաքանչիւրը իր տեղը մնայ։ Երբ Հրացանի հարւածները պարպւած կը լինեն, մենք կը համբուրւենք“։ Կօլօկօտրօնի գնահատեց իր հայրենակցի հաւատարմութիւնը և, նրա դէմ կռւելուց յետոյ, եղբայրագրեց Մարկին, մի սովորութիւն, որ պահպանւում է Յունաստանում միմեանց սիրող և յարգող մարդկանց միջև։

Բօցարիսի Եւրոպա մնալը, այնժամանակւայ մեծ դէպքերից կրթւելը, հաստատեցին նրա անվիճելի գերակշռութիւնը Անկախութեան միւս պարագլուխների վերաբերմամբ։

Մարկը իր տաք հայրենասիրութեանն ու հաղւագիւտ անվեհերութեանը միացնում էր աշխոյժ խելք և խօսելու ձիրք, որ առանց դժւարութեան հասնում էր պերճախօսութեան, նաև զինւորական արւեստի լուրջ ծանօթութիւն և հռչակի մեծ տենչանք։ Իր բարքի մեղմութեամբ նա բոլոր շրջապատողների սէրը գրաւեց, իսկ իր վարքի մաքրութեամբ և անշահասիրութեամբ արժանացաւ ընդհանուրի յարգանքին։ Կարելի է ասել, որ նրա կեանքը զուրկ եղաւ սխալներից և արդիւնաւոր՝ մեծ գործերով։ Էդուարդ Բլակիէր այսպէս է խօսում Բօցարիսի մասին, որին նա ճանաչում էր. „Դիտութեան և դաստիարակութեան տւած առաւելութիւններից զատ, Մարկ Բօցարիս օժտւած էր այն բոլոր առաքինութիւններով, որին մարդ կարող է հասնել։ Նրա բնաւորութեան պարզութիւնը, որի օրինակը կարելի է գտնել Պլուտարքի մեծ մարդկանց մէջ, բարձրացնում էր այդ առաքինութիւնները։ Իր երիտասարդ հասակից, նա նախ իր երկրի յոյսը եղաւ և ապա սքանչացման առարկան, ինչպէս քաղաքացի, հայրենասէր և զինւոր“։

Մարկը հասակով փոքր էր, խարտեաշ մազերով, կենդանի և առողջ, յունական այն ժամանակւայ նորաձևութեան համեմատ երկար մազեր էր պահում, որի

գանգուրները թափւում էին ուսերի վրայ։ Նրա դէմքը արտայայտում էր, ինչպէս և իր բնաւորութիւնը, հեզութեան, եռանդի և անվեհերութեան խառնուրդ։ Նա օժտւած էր ինչ որ հրապոյրով, որ գերում էր նրան մօտեցողին։ Բօցարիս հերոս էր բառիս բուն նշանակութեամբ։ Պատմութիւնը ոչ մի ստւեր չի ձգում այն հրապուրիչ փայլի վրայ, որով բանաստեղծները և նորագոյն Յունաստանը պայծառացրել են այդ անունը։

1820-ին Մարկը մի քանի հարիւր սուլիացիների հետ Շամուրիի մօտ ափ իջաւ։ Մարկ Բօցարիսը Էպիրի հողը կոխելիս ուրիշ ցանկութիւն չունէր, բայց եթէ շուտափոյթ հասնել Սէլլէիտի բարձունքներին. նրա զինակիցները այնտեղ գտնւելու անհամբեր ցանկութիւն ունէին։ Մտածելով, որ Յունաստանում զօրեղ ապրստամբութիւն հանելու բոպէն դեռ չէ հասել, նա տրամադիր էր չէզոք մնալ սուլթանի ու իր ըմբոստ վասսալի միջև, որով յոյս ունէր այդ ներքին կռւում տեսնել Թիւրքիայի ուժերի վատնումը։ Իսկ մինչ այդ նա ցանկանում էր, ինչպէս որ ռուսներն էին այդ ցանկացել 1790-ին, Սուլին փոքր առ փոքր դարձնել զօրեղ կերպով կազմակերպւած դաւադրութեան կեդրոն. բայց դէպքերի շուտափոյթ ընթացքը այս ծրագրի իրագործումը անկարելի պիտի դարձնէր։ Մարկի հօրեղբօր՝ ծերուկ Նօթի Բօցարիսի խորհրդով՝ սուլիացիները թւով ութ հարիւր հոգի, հաշւելով կանանց և երեխաներին՝ ներկայացան Խմայէլ փաշային՝ Սուլիի լեռներին տիրելու թոյլտւութիւն խնդրելով, որտեղ Ալին դեռ պահում էր ուժեղ բերդապահ զօրք։ Խմայէլը խոստացաւ նրանց ինչ որ ուզում էին, միայն այն պայմանով, որ նրանք օգնէին իրան Պրէվէզա քաղաքը առնելու, որ յամառութեամբ պաշտպանում էր Վէլին, Ալիի որդին։ Մի քանի օրից յետոյ Պրէվէզան ընկաւ Բօցարիսի զինւորների ձեռքը, որոնք անմիջապէս պահանջեցին այս ծառայութեան վարձատրութիւնը։ Խմայէլ յետաձգեց իր խոստումների իրագործումը, և Մարկը համոզւեց, որ

սէրասկէրը միտք չունի իր խոստումները կատարելու։ Սուլիացիները վճռեցին չմասնակցել պաշարման աշխատանքներին և հաստատուեցին ս. Նիկողայոս գիւղում, օսմանեան բանակից ոչ հեռու։

Ալին տեղեկանալով նրանց իրաւացի դժգոհութեան մասին, ձեռքից բաց չթողեց այդպիսի օգնականներ գրաւելու յարմար առիթը։

Յիշատակութեան արժանի է այն միջոցը, որ նա հնարեց սուլիացիների հետ բանակցելու համար՝ առանց օսմանցիների կասկածը յարուցանելու։ Ամբողջ մի օրւայ ընթացքում նա իր մարտկոցների կրակով ռմբակոծում էր յոյների վրանները։ Ոչ մի ռումբ չպայթեց։ Զարմացած յոյները զգուշութեամբ կոտրեցին նրանցից մի քանիսը։ Իւրաքանչիւր ռումբ լցուած էր դրամներով և պարունակում էր մի տոմս, որով Ալին ժամադրութիւն էր նշանակում սուլիացիների կողմից բանակցողներին։ Նա նրանց խնդրում էր գիշերը հասնելուն պէս երեք տեղ կրակ վառել ի նշան նրանց բանակցելու համաձայնութեան։ Մարկ Բօցարիս բնաւ չվարանեց վէզիրի ժամադրավայրը գնալ ուրիշ երեք խմբապետների հետ։ Ալի փաշան ամէն ջանք գործ դրեց իր նախկին թշնամիներին համոզելու, որ նրանց շահն էր պահանջում սերտ կերպով միանալ իր հետ և, որպէսզի ամէն կասկած փարատի, նրանց աչքերի առաջ ծաւալեց կայսերական մի ֆէրման, որ իր գործակալները բռնել էին Պինդի պարանոցում։ Այդ ֆէրմանը թելադրում էր Խմայէլին կոտորել Էպիրի բոլոր քրիստոնեաներին՝ սուլիացիներից սկսած։

Յոյն հարիւրապետները վճռեցին ստորագրել պաշտպանողական և յարձակողական մի դաշինք, որ վէզիրը առաջարկում էր նրանց։ Ալին թոյլատրեց սուլիացիներին տիրել իրանց երկրին, և հետևեալ օրը նշանակեց պատանդներ փոխարինելու համար։ Յոյների պատանդներն էին՝ Բօցարիսի եղբայրը, կինը և երեխաները։ Բօցարիս ի զուր պահանջեց, որ իրանց նոր դաշնակցի առջև՝ իր հայրենակիցների աննենգութեանը

պատասխանատու լինելու վտանգաւոր պատիւը իրան շնորհի։ Ամբողջ ցեղը, որ իր բոլոր յոյսերը նրա վրայ էր դնում, հակառակեց նրա գնալուն. այն ժամանակ, Բօցարիս ցանկութիւն յայտնեց, որ պատանդ տարուեն իր երեխաներն ու կինը, իր առաքինութիւններով և գեղեցկութեամբ յայտնի Քրիզէիսը։ Իր կողմից Ալին յոյներին յանձնեց իր որդկերանցից ամենափոքրին և ամենասիրուածին՝ Հիւսէյին փաշային. միայն իբրև վերջին պայման առաջարկեց, որ Կեռֆայի աշտարակը իր ձեռքը մնայ, որ նա իր որդու համար բնակատեղի լինի և որ ալբանացիները այնտեղից չհեռացուեն։ Սուլիացիները առանց դժուարութեան ընդունեցին այս նոր պայմանը, անգիտանալով, որ մի ահարկու բերդ է փոխարինել Կեռֆայի աշտարակին, որը մի ժամանակ անկարող էր յիսունից աւելի մարդ առնել իր մէջ։ Հետևեալ գիշերը նրանք ճանապարհ ընկան դէպի լեռները։ Մարկը, որի ասպետական բնաւորութիւնը չէր հաշտւում գիշերային փախստի հետ, մերժեց հեռանալ իր վրանից լուսանալուց առաջ և մնաց մի քանի անվեհեր ընկերակիցների հետ։ Արևածագին նա մօտեցաւ թիւրքական առաջապահեստներին (avant-poste) և մի քանի գնդակ ուղարկեց իր անջատումը նրանց հաղորդելու համար և առանց հալածելու նետուեց իր հայրենակիցների ետևից, որոնց միացաւ երեկոյեան դէմ։ Սուլիացիների զարմանքն ու հիասթափումը չափազանց մեծ եղաւ, երբ նրանք լեռները մտնելով՝ ահագին պարիսպներ նկատեցին Կեռֆայի նախկին պ ի ր գ ո ս ի տեղում։ Նրանք բաւականացան միայն բազմաթիւ պահակներ դնելով այդ միջնաբերդի բոլոր ճանապարհների վրայ, միևնոյն ժամանակ խմացրին վէզիրին, որ նրա որդուն խստիւ փակուած կը պահեն Սուլիում մինչև որ Կեռֆայի բանալիները իրանց յանձնեն։

Պատերազմին աւելի ազգային գոյն և աջողութեան նոր գրաւական տալու համար, Բօցարիս շտապեց դաշն կապել Թեսպրոտիայի քրիստոնեաների հետ։ Այս ա-

առաջին անգամն էր, որ լեռը այնպէս սերտ կերպով միանում էր դաշտին և Սուլեի հանրապետութիւնը այդ վայրկեանից տարածուեց Եանինայից մինչև Լօռու կոչուած գաւառակը, որ հարեան էր ծովին։ Բօցարիս այս կերպով երեք հազար հինգ հարիւր մարտիկների գլուխն անցաւ։ Մարկը մտածեց նախ կայսերական բանակի և Արտայի հաղորդակցութիւնը կտրել։ Նա տիրեց ամրացրած քարաւանսէրային, որ իշխում էր Հինգ-Ջրհորի կրճին, Եանինայից եօթ մղոն հեռու դէպի հարաւ-արևելք։ Այս կէտից նա կարող էր ձեռք տալ ջրմերկայի ռազմասէր կլէֆտներին։ Առաջին անգամ Էպիրի արձագանքները հնչեցրին „Օն յառաջ հելլէնների որդիք“, հայրենասիրական և ռազմական երգը, որ շարադրուած էր Մարսէլիէզի եղանակով և որ Յունաստան էր մտել ֆրանսիական դրօշի տակ ծառայած սուլիացիների միջոցով։ Այս երգը արագութեամբ տարածուեց յոյների մէջ և նախերգանք հանդիսացաւ նրանց մի քանի փառաւոր յաղթանակներին։ Հինգ-Ջրհորի և բազմաթիւ կարաւանների կորուստը Իսմայէլի բանակի մէջ իրարանցում առաջ բերեց։ Թիւրքերը անմիջապէս ընտրեցին երեսունվեց սպայ, որոնք պէտք է արտասանէին Ղուրանի առաջին գլուխը օրական ինսուն երկու անգամ և երեսունվեց դէրվիշ, որոնք ստիպուած էին նոյն ժամանակամիջոցում ստանալ խարազանի ինսուներկու հարուած իրանց գլխաւորի ձեռքից։ Մարգարէի բարկութեանը այս առաջին հատուցումը տալուց յետոյ, — բարկութիւն, որ շատ պարզ կերպով արտայայտուեց քրիստոնեաների յաջողութիւններով — հինգ հազար հետևակ և ձիաւոր ուղարկուեց քարաւանսէրայը առնելու համար, որ գրաւել էին երկու հարիւր յիսուն սուլիացի։ Վերջիններս Ալի փաշայից խմացած լինելով այս յարձակման մասին, թոյլ տուին թշնամուն մօտենալ մինչև փոքրիկ ամրոցի ստորոտը և դիմաւորեցին նրանց մօտաւոր հրացանաձգութեամբ։ Բայց և այնպէս մուսուլմանները յարձակողական վերելք գործեցին։ Նոյն իսկ վայրկեանին Բօցարիս, որ դարան էր մտել շրջակայ լեռներում, յարձակուեց նրանց վրայ մի խումբ մարդկանցով, թաւալգլոր արեց նրանց և հետամուտ եղաւ մինչև Տիրիակիի կիրճը։ Այս աջողութիւնից յետոյ Մարկը շտապով Հինգ-Ջրհորի կիրճը եկաւ գերիներին խլելու։ Արդէն սուլիացիները նրանցից շատերին գլխատել էին և նրանց գլուխներից յաղթութեան խորհրդանիշեր կազմել։ Բօցարիս վերջ տուեց այս արիւնոտ պատժին. նա թոյլ չտուեց, որ իր յաղթանակների փայլը նսեմանայ նմանօրինակ բարբարոսութիւններով։ Իր ամենամեծ մտահոգութիւններից մէկն այն եղաւ, որ իր փոքրիկ գնդերի մէջ կարգապահութիւն մտնի, որ նա սովորել էր Եւրոպայի կուսակալներում։ Եւ այդպիսով յունական անկախութեան կռիւները Բօցարիսի հետ մի վսեմ նկարագիր են ստանում, որ նրանք չունէին մինչև նրա երևալը. նրանք այլևս անկապ կռիւներ, ցրուած դիպուածներ, ապարդիւն յաղթանակներ չեն։ Նոր պարագլուխը ուղղում է նրանց դէպի մի որոշ նպատակ, որ թիւրքերի վռնդումն է, ոչ թէ ինչպէս առաջ՝ մի գիւղից, մի լեռից, մինչև անգամ մի գաւառից, այլ ամբողջ յունական հողից։

Շնորհիւ Բօցարիսի աջողութիւնների՝ ապստամբութիւնը արագ կերպով տարածուեց։ Ամբողջ Կասիոպիան ոտքի կանգնեց. նոյնիսկ ալբանացիները սկսեցին զզուել Իսմայէլին ծառայելուց։ Նրանց գլխաւորներից երկուսը՝ Թահիր-Աբբաս և Հագոս-Բեսսարիս, որ թէ Ալիի և թէ սուլթանի դաշնակիցներն էին եղել, սուլիացիների կողմը անցան։ Սէրասկէրը, որի զօրքը ահագին վնասներ էր կրել, որոնք նոր ոյժերով դեռ չէին փոխարինուած, պատուիրեց իր տեղակալ Բեկիր-Ջօգատօրին՝ բանակցութիւններ սկսել Սէլէֆիի յոյների հետ։ Վերջիններս համաձայնեցին մի ամսուայ զինադադար անել։ Պօլէմարկը՝ հարաւային Յունաստանի անգործութեամբ մատատանջ՝ օգտուեց այս զինադադարից և ուղարկեց Հելլադայի ու Պէլօպօնէսի գիւղերը պատուիրակներ, որոնց յանձնարար-

ւած էր իր յաղթանակների լուրը տարածել այնտեղ։ Մի քանի շաբաթից Սուլիի պատերազմները մեծ նորութիւններով յետ դարձան. Գերմանոս՝ Պատրասի միտրոպոլիտը, 1821 թւի մարտի 26-ի կոնդակով Յունաստանի անկախութեան իրաւունքները հռչակեց, ապըստամբութեան դրօշը պարզեց և խնդրեց օտար պետութիւնների օժանդակութիւնը։

Մինչ այս մինչ այն՝ Խուրշիդ փաշան փոխարինում է Իսմայէլին։ Ապստամբութիւնը բռնկուելուց մի քանի օր առաջ Խուրշիդ շտապով Էպիր է գալիս և Յանինայի պատերի տակ բանակ է դնում ճիշտ այն միջոցին, երբ զինադադարի ժամանակը լրանում էր։ Զարհուրած Ալի փաշան զիջանում է Կեսֆայի բերդը քրիստոնեաներին՝ նրանց աւելի սերտ կերպով իր գործին կապելու նպատակով։ Էպիրի ապստամբները խմբովին ապաստանում են Սուլի սարը։ Այս օրից սկսած Բօցարիսի կեանքը կռիւների մի անվերջ շարք է ներկայացնում, որ երբէք փառաւոր շրջան ունի Արտայի պաշարումը, Էպիրի արշաւանքը 1822-ին, և վերջապէս, Կարպենիցիի ճակատամարտը։

Արտայի պաշարումը ռազմական այն քաջագործութիւններից մէկն էր, որը ամենից աւելի նպաստեց Բօցարիսի հռչակի ստեղծուելուն։

Արտան պարունակում էր իր մէջ տասը հազար պաշտպան և ուժեղ ռմբաձիգ զօրք։ Բօցարիս նրան տիրել էր ուզում, որովհետև դրանով հաղորդակցութեան ճանապարհ էր բացւում Հիդրայի նաւախմբերի և Ագարնանիայի ապստամբների հետ։ Առաջին անգամն էր, որ յոյները մեծ քաղաք էին պաշարում։ Բօցարիս ամեն ջանք գործ դրեց աջող ելքի հասնելու համար։ Մարկ եկաւ Սուլիից վեց հարիւր մարդով։ Հաղիւ էր նա լեռներից իջել, որ ալբանացիները սուլթանի կողմն անցան։ Առանց յուսահատուելու՝ նա վճռեց Սուլի չմտնել, մինչև որ ծովի հետ հաղորդակցութեան ճանապարհ չբանայ։ Արտային տիրելու միտքը նա թողեց և դիմեց դէպի Ռէգնիասա աշտարակը։ Արիւնահեղ մի յարձակումով տիրեց նրան և մէջը բերդապահ զօրք դնելուց յետոյ, յանկարծակի երևաց այնտեղ, ուր թիւրքերը նրան իսկի չէին սպասում. Ալթամանիայում նա գրաւեց Պլագա կարևոր կէտը, որ ուղում էր իր զինուորական գործողութիւնների կեդրոն դարձնել։ Մի քանի օր յետոյ նա կոտորեց մի ամբողջ զօրաբանակ, որ դիմում էր դէպի Խուրշիդի բանակատեղին, իսկ դրանից յետոյ պատահեց Իսմայէլ փաշային, Պասսարոնի դաշտավայրում, ուր վերջինս արիւնահեղ պարտութիւն կրեց։ Վերջապէս, նոր աջողութիւններից յետոյ, նա Սուլի եկաւ հանգստանալու։

Հայրենիքի սէրը չէր միակ այն դրդիչը, որ առաջնորդում էր Բօցարիսին կռուի դաշտում։ Ցիշում էք անշուշտ, որ Քրիզէիս և իր երեխաները դաւաճան Ալիի մօտ էին գտնւում իբրև պատանդ և որ սրանց փրկութիւնը կախուած էր վերջինիս փրկութիւնից։ Մարկը տածում էր դէպի այս ջահէլ, գեղեցիկ և անձնուէր կինը մի խանդավառ քնքշութիւն, տարբեր այն ստոյիկ գորովից, որ սուլիցիները տածում են դէպի իրանց հարպարտ ընկերուհիները։ Սուլիի կանայք, որ աչքի էին ընկնում մանաւանդ իրանց անվեհերութեամբ, որ տղամարդկանց պէս վարժ զէնք էին գործածում, առնացի ոգու տէր էին, ուր հայրենասիրութիւնը, պատիւը, դէպի թիւրքերը ունեցած ատելութիւնը ուրիշ աւելի քնքուշ զգացումների համար բնաւ տեղ չէին թողնում։ Քրիզէիս, որ մեծացել էր Կորֆուում, ընդհակառակը՝ օժտուած էր իր սեռի բոլոր հմայքներով ու շնորհքներով։ Բօցարիսի դէպի նա ունեցած սէրը, ծանր տագնապները և այն վիշտը, որ իրան պատճառում էր կնոջ վտանգաւոր գերութիւնը՝ թողել է հեռաբեր Յունաստանի այս մասի ժողովրդական բանաստեղծութեան մէջ։ Էպիրի աշուղները կարծես հասկացել են իրանց հերոսի կեանքի այս ներքին կողմը և գուշակել են նրա գաղտնի վշտերի աղբիւրը։ Նրանք երգել են Մոշոների և Խայիտոների արիութիւնը և քաջագործու-

թիւնները, իսկ Քրիզէիսին նւիրել են իրանց ամենասրտառուչ մրմունջներն ու ամենամելամաղձիկ շեշտերը.

„—Քրիզէիս նստած ոսկեթել ձեռագործ է անում, բայց նրա աչքերը չեն հետևում բնաւ իր ասեղնագործին. նրանք ամպերն են դիտում և վազում նրանց ետևից։

„—Էլ սիրտս փակւեց, նա չի բացւում և չի ծիծաղում, ինչպէս երբեմն, իմ աչքերը արտասուք են զեղում, նրանք լիճ, ծով են կազմում։

„—Բե՛ր իմ ազգի զգեստները (ասում է մի ուրիշ երգ), երեք ամսից ի վեր նրանից լուր չունեմ։ Մեռած է նա կամ ինձ մոռանում է։

„—Նոճու վրայ նստում է մի թռչնակ.—Նա մեռած չէ և քեզ խելի չի մոռացել։ Թիւրքերի դէմ է մարտնչում նա Վարխադէսում, Սիստրանիում, Լելօվլյում։ Փաշային տասը հազար գլուխ է խոստացել Բոցարիս, որպէսզի քեզ կրկին իր մօտ ունենայ։ Վեց հազարը արդէն ընկել են նրա հարւածների տակ։ Շուտով Ալին լաց կը լինի քո գնալը տեսնելով։„

Այս վերջին խօսքերը ցոյց են տալիս, որ վէզիրը սիրահարւել էր իր գերուհու վրայ։ Մի ուրիշ երգի կտոր ցոյց է տալիս՝ թէ որպիսի իրաւացի հպարտութեամբ էր վարւում Քրիզէիս ահեղ փաշայի հետ։

„—Լցրու բաժակս, ասում է նրան Ալին, և թոյլ տուր ակնապիշ դիտել քեզ, մինչդեռ ես կը դատարկեմ քո լցրած բաժակը։

„—Շիկնում է Քրիզէիս ամօթից և բարկութիւնից։ —Ես քո գերուհին չեմ, որ խմիչք լցնեմ քեզ, ասում է նա. ես թոռն եմ և դուստր յոյն կղզիների պետերի և կին Բոցարիսի։“

Վերջինս տենչում էր տեսնել իր սիրածին։ Նա միաբանեց ակարնանիացիների պետի՝ Կարայիսկոսի հետ, որ խոստացաւ բերել հազար մարդ և մեկնեց Սուլիից 1821 թւի նոյեմբերի 11-ին՝ երեք հարիւր պալլիկարների գլուխն անցած։ Բոցարիս մտածում էր գիշերով հասնել Ամֆիլօխիայի դաշտավայրը, յարձակւել թիւրքերի վրայ լուսադէմին, թաւալգլոր անել

տալու չկրած թշնամուն և հէնց բերդաքաղաքի կեդրոնում՝ ձեռք տալ Կարայիսկոսին, որը հարաւից յարձակւում պիտի գործէր քաղաքի վրայ։ Այս ծրագիրը թէև յանդուգն էր, սակայն լուրջ հիմքերի վրայ էր դրւած, եթէ մարդ մտածի, թէ ինչ հեշտութեամբ թիւրքերը տեղի էին տալիս իրանց կատաղի հակառակորդներին։ Դժբախտաբար թիւրքմէն տաւարածները սուլիացիների շարժումները նկատած լինելով, Արտայի մէջ իրարանցում գցեցին։ Հազարաւոր ալբանացիներ անմիջապէս վազեցին ամրացրած կամուրջը պաշտպանելու, որ ձգւած էր Ինախոսի վրայով և որին Բոցարիս պէտք է անհրաժեշտաբար տիրէր՝ քաղաքին մօտենալու համար։ Մարկը չվարանեց յամենայն դէպս անցնելու փորձ անել։ Չնայած իրանց պետի թախանձանքներին և իրանց ոգևորող եռանդին, յոյները չշեղւեցին իրանց հին սովորութիւնից, որ Հոմերոսի հերոսներից էին ընդունել և որը կուի ելնելու ժամանակ հայհոյանքների տարափ թափելն է թշնամու հասցէին։

Մարկը վերջ տւեց դրան,—դա ժամանակի կորուստ էր։ Այդ րոպէին ութ հարիւր ձիաւոր յարձակւում են սուլիացիների վրայ։ Վերջիններս նահանջում են դէպի Միհուրտի գիւղը և ամրանում։ Թնդանօթները ռմբակոծում են գիւղը. հեծելազօրը ուզում է քրիստոնեաների ճանապարհը փակել ետևից։ Մարկը մի քանի հետևորդներով հասնում է ամեն տեղ քաջալերելու և հրամաններ արձակելու։ Կռիւը, որ շարունակւում էր արդէն մի քանի ժամից ի վեր, անշուշտ սուլիացիների ջնջումով էր վերջանալու, երբ Նօթի Բոցարիս կողքից անակընկալ յարձակում գործեց թիւրքերի վրայ չորս հարիւր պալլիկարով։ Այս ծերուկ զինւորը, լսելով թնդանօթների որոտը, չէր կարողացել դիմադրել կուին մասնակցելու ցանկութեան։ Բոցարիս նրան տեսնելով՝ մի կատաղի յարձակում է գործում, մինչդեռ Նօթի խորտակում է թշնամու շարքերը։ Երեկոյեան դէմ սուլիացիները տիրել էին տեղին մինչև ամրացրած կամուրջը։

Նրանց միացան երկու հազար տօկսիդ Էլմաս-բէյի հրամանատարութեամբ, որ վճռել էր Ալի փաշայի և նրա դաշնակից սուլթանների կողմն անցնել։

Երկու օրից յետոյ տօկսիդները և սուլթանները ներս խուժեցին Արտայի շրջապատով, գտան այնտեղ քաջ Կարայիսկոսին և մի մոլեգին կուռից յետոյ՝ քաղաքի երեք քառորդ մասին տէր հանդիսացան։ Գիշերը բաժանեց կուռողներին։ Հետևեալ օրը յարձակում տեղի պիտի ունենար միջնաբերդը գրաւելու համար։ Յարօրինակ պատկեր էր ներկայացնում տօկսիդ դէրվիշների և սուլթանի քահանաների մաղթանքը, որոնք կողք կողքի գոհութիւն էին վերառաքում երկինք՝ իրանց ընդհանուր յաղթանակի համար։ Բլուրների վրայ վառած կրակների մի ամբողջ շարան յայտնեց Սուլթին քրիստոնեաների յաղթանակը, բայց նոյն ուրախութեան կրակների լուսով բաղդի մի անսպասելի հարուած էր պատրաստւում։ Շամուրիի բէյերը մի քանի օրից ի վեր խորհրդակցում էին՝ թէ որ կողմին պիտի յարեն իրանք։ Նրանք ոչ դէպի սուլթանն էին հակուած, ոչ էլ դէպի յոյները. առաջինին ծառայելը ծանր էր գալիս անկախութեան համար նրանց ունեցած մոլեռանդութեանը. միւսներին դաշնակցելը՝ գուցէ աւելի մեծ խորշում էր պատճառում նրանց կրօնական ֆանատիկոսութեան։ Խուրշիդի բազմաթիւ պատգամաւորները համոզեցին նրանց վերջապէս, ամենասքանչելի խոստումների միջոցով՝ սէրասկէրի գրօշակի տակ մտնել։ Բէյերը խոստացան իրանց ամբողջ ազդեցութիւնը գործ դնել տօկսիդներին համոզելու։ Գիշերը շամիդների պաւիրակները աջողեցին մտնել ալբանացիների բանակատեղին։ Նրանք աղերսեցին Էլմասին, յանուն մարգարէի կրօնի, չկուռել այլևս իրանց հաւատի թշնամիների կարգերում։ Ջիջանելով նրանց յորդորներին, Էլմաս-բէյը անմիջապէս հրամայեց իր մարդկանց բանակը վերցնել և հեռանալ ամենախոր լռութեան մէջ. բայց նա չհամաձայնեց զէնք բարձրացնել իր նախընթաց օրւայ դաշնակիցների դէմ։

Երբ սուլթանները լուսադէմին պատրաստւում էին վերսկսել կռիւը, տօկսիդները կախարդուածների պէս անյայտացել էին։ Սակայն Մարկը յաղթանակը մինչև վերջ տանելու յոյսը չէր կտրել։ Խուրշիդի ուղարկած զօրաբանակի լրտեսների երևումը այս յոյսը ի դերև հանեց։ Բայց և այնպէս Մարկը կռուի հրաւէր կարդաց իւրայիններին։ Միջնաբերդի գրաւման մասին խօսք լինել այլևս չէր կարող։ Մոռանալու չէ սակայն, որ Կարայիսկոս և ագարանիացիները յափշտակել էին այս ձեռնարկով Սէլլէիտի հրամանատարի շնորհիւ։ Վերջինս կամեցաւ վտանգի ժամին զոհ բերել իրան իր դաշնակիցների փրկութեանը և հեշտացնել նրանց փախուստը, իրան միայն թշնամու հարուածների վտանգին ենթարկելով։ Հէնց նոյն վայրկեանին, երբ նա դիմում էր դէպի միջնաբերդի պարիսպները, յորդորեց Կարայիսկոսին հեռանալ կռուի դաշտից, որ միմիայն անխուսափելի պարտութիւն էր խոստանում։ Կարայիսկոս մերժեց. միայն Մարկի պաշտօնական և կրկնակի հրամաններին զիջանելով, համաձայնեց նահանջել։ Սուլթի հերոսի այս վեհանձն վարմունքի շնորհիւ էր, որ ագարանիացիները ազատուեցին և ճանապարհ ընկան դէպի իրանց հայրենիքը։ Մի քանի ժամից յետոյ սուլթանները էլ էին փախչում և լոզ տալով անցնում էին Ինախուսը, որ յորդացել էր վերջին անձրևից։

Ինախուսի եզերքին հասնելով, յոյները միւս ափին մի ջոկատ ձիաւոր տեսան, որ պատրաստւում էր նրանց ճանապարհը կտրել։ Բօցարիս հէնց նոյն վայրկեանին նկատեց եղների մի նախիր, որ իր հրկիզած գոմերի շուրջն էր պտտում։ Նա անմիջապէս հրամայեց իր զինուորներին հաւաքել նախիրը, կախուել կենդանիների պոչից և ուժգին ծակծկել նրանց թրերի ծայրով։ Եղները՝ կատաղած ցաւից և սուլթանների աղաղակներից՝ գետը նետուեցին, տանելով իրանց բեռը, որից ազատուել չէին կարողանում՝ չնայած իրանց բոլոր ճիգերին. նրանք յախուռն կերպով նետուեցին թիւրք ձիաւորների վրայ, որոնց խրատած ձիերը չորս կողմը ցրուեցին։

Սուլիացիների նահանջից մի քանի օր յետոյ Թիւրքերը գրաւեցին Ռէգնիասայի աշտարակը: Բերդապահ զօրքը բաղկացած էր յիսուն երեք պալլիկարից, որոնք երդուել էին Բօցարիսին՝ պաշտպանել աշտարակը մինչև վերջին շունչը: Ահմէդ-աղան երեք հազար մարդով պաշարեց նրանց և իր առաջին յարձակումը յետ մղուած լինելով, առաջարկեց պաշարուածներին որևէ համաձայնութեան գալ իր հետ: Նրանց պետը՝ Ցիմոլաս և իր զինակիցները համաձայնեցին անձնատուր լինել, այն պայմանով, որ թոյլ տրուի նրանց, զէնքերով ու գոյքերով ցրուել իրանց տները: Այս պայմանը առանց դժուարութեան ընդունուեց, և նրանք դուրս եկան աշտարակից: Բայց երբ հասան Աշերօնի ափերը, հանդիպեցին մի խումբ պալլիկարների, որոնք իջել էին Սուլիից նրանց զինաթափ անելու և դաշնակցութեան հողի վրայ մուտքը արգելելու պատուէրով: Լեռնականները զայրացել էին Ռէգնիասայի անձնատուր լինելուց: Ցեմոլասի զինուորներին, որոնք երդուել էին թաղուել բերդի աւերակների տակ, նրանք ամբաստանում էին, իբրև ուխտադրուժների և երկչոտների: Վերջինները՝ ընկճուած խղճի խայթից և ամօթահար, ի զուր ջանացին իրանց հայրենակիցների ցասումը մեղմել և ստիպուած եղան զինաթափ լինել: Ժերոնդների (ծերունիների) խորհրդի վճիռը նրանց կտրեց ձգեց հայրենի ծոցից: Միևնոյն ժամանակ նրանց տները սև ներկուեցին վերից վար: Կարծես նրանք իսկապէս մեռած լինէին. իսկ նրանց կանայք սև հագած՝ ներկայացան ծերունիների խորհրդին ապահարզան պահանջելու, օգտուելով այն իրաւունքից, որ Սուլիի խիստ օրէնսդրութիւնը շնորհում էր նմանօրինակ դէպքերում: Երկար ժամանակ այս դժբախտները թափառեցին լեռների շուրջը, զղջալով և ցաւելով: Վերջապէս, ներողամիտ Բօցարիսի հրաւէրով, քահանաները միջնորդեցին ծերունիների խորհրդի առաջ և յանցաւորները վերըստացան իրենց զէնքերը. սակայն հայրենիքը համաձայնեց կրկին նրանց իր ծոցը ընդունել մի-

1001

այն այն ժամանակ, երբ իրանց պատիւը վերականգնեն որևէ մեծ քաջագործութեամբ: Անմիջապէս այդ յիսուն երեք պալլիկարները կատաղութեամբ նետուեցին Թեսպրօտիայի դաշտերը, ջարդ ու փշուր արին բազմաթիւ զօրքեր, որ դիմում էին դէպի. Խուրշիդի բանակատեղին և յայտնեցին Սուլիում իրանց պատւին կպած բիծը թշնամու արիւնով լուալուց յետոյ:

Բօցարիսի միջամտութիւնը ապացուցանում է, որ պօլեմարգը կարծես ուզում է մեղմացնել սուլիական օրէնքների ծայրայեղ խստութիւնը: Մանաւանդ նրան զայրացնում էր սուլիացիների թեթև վերաբերմունքը դէպի մարդկային կեանքը:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/VI..1922
имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

II

Արտայի դէպքից մի ամիս յետոյ վերջապէս Ալիփաշան բռնուեց և գլխատուեց, իսկ Խուրշիդը՝ Թիւրք զօրապետներից ամենագործունեան ու ամենաճարպիկը, պատրաստուեց քառասուն հազար մարդ թափել Սուլիի լեռները: Մարկ Բօցարիս Յունաստանի ազատութիւնը կապուած էր համարում Սելլէիտի պահպանմանը:

Նա շտապով Կորնթոս գնաց և յունական ծերակոյտից, որ այդտեղ էր ժողովուած, անմիջական օգնութիւն խնդրեց, ինչ որ նրան չզլացան: Այս առթից օգտուելով, Կօլօկօտրօնի տեսնուեց իր եղբայրագրած զինակից ընկերոջ հետ և օգնեց նրան ծերակոյտի առաջ իր զօրեղ ազդեցութեամբ: Մի միջադէպ հռչակեց նրա տեսակցութիւնը սուլիացիների արդէն անուանի դարձած պետի հետ: Կօլօկօտրօնի առաջինը գնաց տեսնելու այն մարդուն, որին նա մի ժամանակ ճանաչել էր իբրև անյայտ մէկը և որին նա կրկին տեսնում էր՝ հիմայ արդէն մեծ անուն հանած: Նա հագել էր իր ամենափայլուն զգեստները: Մարկը, ընդհակառակը, որ Կորնթոս էր եկել առանց հետևորդների և անշուք կերպով, չէր հանել լեռնցու իր համեստ զգեստը: Կօլօկօտրօնի շռ-

փոթուած այն հակապատկերից, որ կար իր փարթամ հանդերձների և Սուլիի զօրապետի անպաճոյճ ու մարտական հագուստի միջև, քիչ խօսեց, հալիւ նստեց և կարճ կապեց իր այցելութիւնը, որ նրան նեղ դրութեան մէջ էր ձգում: բայց նա կրկին եկաւ հետևեալ առաւօտը, այս անգամ կլէֆտի հին զգեստներով: Նրան տեսնելիս Բօցարիս առաջ վազեց և գրկելով „բարի լենի, եղբայր, բացականչեց, ա՛յ հիմա կատարեալ պալլիկար ես. ճանաչում եմ քեզ այժմ, համբուրենք:“

Կոլոկոտրոնի, որ Յունաստանի ամենավճռական կլէֆտներից մէկն էր, առաջարկեց Բօցարիսին ընդունել զօրքերի հրամանատարութիւնը, որոնք անմիջապէս պատրաստեցին Սէլլէիդ գնալ: Բօցարիս մերժեց այդ պատիւը և դրդեց կառավարութեան նախագահ Մաւրոկօրդատոին, որ ինքը իր զօրքերի գլուխն անցնի: Քիչ յետոյ նախագահը Պատրաս եկաւ, անցաւ Միսոլոնգի և դէպի Էպիր ճանապարհ ընկաւ զօրքի հետ, որ իր կարգերում բազմաթիւ ֆրանսիացի, գերմանացի, իտալացի, լեհ հելլենասէրներ ունէր: Դա առաջին եւրոպական ձևով մարզուած յունական գունդն էր:

Մաւրոկօրդատոս ըմբռնել էր Բօցարիսի այն միտքը, որ անհրաժեշտ է ազատել Էպիրը և այնտեղ կեդրոնացնել կռիւը: Դժբախտաբար Բօցարիսի և նախագահի ունեցած միջոցները քիչ էին համապատասխանում մի այդպիսի մեծ նպատակի. նրանց զօրքի թիւը 3,500-ի հազիւ էր հասնում: Բայց և այնպէս նրանք առաջացան դէպի Արտա, որի բերդապահ զօրքը թուով չորս անգամ գերազանց էր: Նախագահը և հելլենասէրները հասկացան, որ նախ քան Սուլի մտնելը, անհրաժեշտ էր Արտային տիրել, որպէսզի մի զօրեղ կայան ստեղծեն դաշտավայրում և ապահով հաղորդակցութիւն՝ Յունաստանի մնացեալ մասի հետ: Դա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի ձեռնարկ Բօցարիսի մի քանի ամիս առաջ յղացած ծրագրի իրագործման: 1822 թուի յունիսի կէսերին յոյները բանակեցին Կոմբոտիի բարձունքների վրայ, որ մօտ երկու ժամուայ ճանապարհ էր Ամֆիլոխիայի մայրաքաղաքից: Շատ չանցած՝ հելլէնասէրները մինչև Պետա կոչուած աւանի շրջակայքը առաջ գնացին, որպէսզի Արտայի պաշտպանների և Սուլիի պաշարման մասնակցող մուսուլման զօրքերի միջև ամէն հաղորդակցութիւն կտրի: Թշնամու միշտ աճող բազմութեան և պաշարի սակաւութեան պատճառով արդէն մի քանի շաբաթից ի վեր վերջին տագնապի մատնուած սուլիացիները սուրհանդակ սուրհանդակի ետևից ուղարկում էին Կոմբոտիի գլխաւոր բանակատեղին՝ անմիջական օգնութիւն խնդրելու: Այս նորութիւնները ստանալով՝ Բօցարիս և Մաւրոկօրդատո գիշերով բացօդեայ ժողով գումարեցին, որ կայացաւ Պոտիմի գետակի ափին: Այդ ժողովում վճռուեց, որ Բօցարիս 500 մարդով երթայ ու աշխատէ լեռը մտնել, մինչդեռ հելլէնասէրները ալբանացիների օգնութեամբ աշխատեն թշնամու ամբողջ ուշադրութիւնը գրաւել Պետա աւանի վրայ: Բօցարիս հետևեալ առաւօտը ճանապարհ ընկաւ և գիշերուայ հասնելուն սպասելով, անտառում թագնուեց, որպէսզի թիւրքերի միջով անցնելու փորձ անի: Սակայն նա անդադար անանցանելի արգելքների էր հանդիպում: Մի շաբաթից յետոյ՝ ցաւից մորմոքած, չարաչար յոգնած նա կրկին երևաց Կոմբոտիում երեսուն երկու մարդով: Մնացեալ մասը ընկել էր բազմաթիւ կռիւներում կամ փախել Պինտի ուղղութեամբ:

Այդ միջոցին տօկսիդ Գոգոսը հազար ռազմիկ բերեց Մաւրոկօրդատոի բանակը: Այս օգնութիւնը աւելի տեղին չէր կարող լինել, բայց և այնպէս նախագահը տատանուում էր ընդունել: Մի չարակարծ համբաւ էր ծանրանում այս ալբանացու գլխին, որին հանրային կարծիքը մեղադրում էր իբրև կիցոս Բօցարիսի հօր սպանող: Բօցարիս՝ ոտնատակ տալով իր անձնական ոխը, վճռեց հաշտուել այն մարդու հետ, որի ներկայութիւնն իսկ նրան կատարեալ զզուանք էր պատճառում, բայց

որին նա յոյս ունէր այդ միջոցին տեսնել իբրև մի պիտանի օգնական։

Բօցարիս այդ օրը մեծ սխալ գործեց, որի համար մեղաւոր է միայն իր հոգու մեծութիւնը։ Գօգօս յոյների կորուստն էր որոճում. Խուրշիդը նրան կաշառել էր։ Այս դաւաճան ծերուկը, մի քանի օր յետոյ՝ Պետայի ճակատամարտի ժամանակ, կռւի ամենատաք տեղը փախուստ տւեց, և յոյները պարտութիւն կրեցին։

Երեք օր վերջը իմացւեց, որ սուլիացիները անձնատուր են եղել՝ տեղի տալով թշնամու թւին, սովից և յոգնածութիւնից ուժասպառ եղած։

Սուլին սէրասկէրի ձեռքն ընկած լինելով, Մաւրոկորդատօն էլ չէր կարող մտածել Էպիրում մնալու մասին։ Նա յետ դարձաւ Միսօլօնգի։ Նրա փոքրիկ զօրքը ճիգ թափեց դիմադրելու՝ Խուրշիդին փոխարինող Օմեր-Բրիօնէս փաշայի յաղթական զօրքերին։ Այս մի բուռն քաջերը դանդաղ նահանջ կատարեցին՝ թանգ ծախելով իւրաքանչիւր թիզ հողը և դէպի թշնամին դառնալով ամեն մի յարմար կէտում։ Այս երկար ու դժւարին նահանջի ընթացքում նրանք ցոյց տւին սառնասրտութիւն և բարոյական ոյժ, որի պահպանման մեծապէս նպաստեցին Բօցարիսի և հելլէնասէրների ներկայութիւնը։ Վերջապէս, հոկտեմբերի 21-ին յոյները, որոնց թիւը հարիւրից պակաս էր, հալածւելով հազար հարիւր թիւրքերից, Միսօլօնգի մտան, որի պաշարումը նոր Յունաստանի պատմութեանը պիտի ընծայէր նրա ամենագեղեցիկ էջերից մի քանիսը, իսկ Բօցարիսին՝ նրա փառքի ամենամեծ փայլը։

„Ո՜հ, ինչպէս կ՚ուզէի ես թռչուն լինել, ասում է մի ժողովրդական երգ, որ Միսօլօնգի թռչէի-գնայի և տեսնէի՝ թէ ինչպէս են սուր խաղացնում, ինչպէս են զարաբինան գցում, ինչպէս կռւում Ռումելիայի այս անպարտելի անդղները ...

„Սև ամպրոպներ կը կուտակւեն Միսօլօնգիի շուրջը. Նրանք զինւորներ աշխարհ կը բերեն, և Սուլիի առիւծները այնտեղ կը գտնեն իրանց խինդը։“

III

Միսօլօնգի մտնելիս Մաւրոկորդատօ քառասունհինգ զինւոր ունէր, իսկ Բօցարիս՝ երեսունհինգ, և երբ զէնք կրելու ընդունակ բնակիչները միացան նրանց, ընդհանուր թիւը հասաւ երեք հարիւրի։ Բնակիչների ամենամեծ մասը փախել էր։ Մի քանի հարիւրապետ կարծիք յայտնեցին նաւեր մտնելու և անյապաղ Պելօպօնէս հասնելու մասին՝ սրտերը արդարացի երկիւղով լցւած մի այդպիսի անհաւասար կռւի արդիւնքից։ „Եթէ մենք հեռանանք, ասաց նրանց Մաւրոկորդատօ, թշնամին կ՚անցնի առանց արգելքի հանդիպելու, կը տիրանայ Մօրէային և ամեն ինչ կորած է։ Ինչ կը վերաբերի ինձ, ես այստեղ կը մեռնեմ։“ — Ես էլ նմանապէս, բացականչեց Բօցարիս։

Այս խօսքերը ամեն տատանման վերջ դրին։

Մի քանի օրւայ մէջ քաղաքից հեռացրին կանանց, երեխաներին և ծերունիներին, որոնք մի մութ գիշերւայ շնորհիւ աննկատելի կերպով անցան թիւրքական երեք նաւերի միջից, որոնք պաշարելու էին եկած։ Նրանց մեծ մասը Յօթը-կղզիները ապաստանեց։ Այդ միջոցին Բօցարիս, երկու տարւայ անջատումից յետոյ, կրկին գտաւ Քրիզէիսին և իր երեխաներին։ Բայց այս երջանկութիւնը կարճատև եղաւ։ Տխուր նախազգացումներով պաշարւած, նա վճռեց հեռացնել իր ընտանիքը կռւի թատերաբեմից և ուղարկել Անկօն՝ իր հօրեղբայր ծերունի Նօթիի հսկողութեան տակ դնելու, որ Սուլիի վերջին պօլեմարգն եղաւ։ Քրիզէիս ի զուր աղաչեց նրան, որ թոյլ տայ իրան նրա վտանգներին մասնակից լինել։ „Երբւանի՞ց ի վեր, ասում էր նա, սուլիացի կանայք թողնում են իրանց ամուսիններին կռւի ժամին։ Միթէ՞ նրանք արդէն մոռացել են հրացաններ լցնել և վէրքեր կապել։“ Մարկը անդրդուելի մնաց։ Երբ առատ արտասուքներ թափեցին ծովափին, որ վերջին անգամն էր նրանց միատեղ տեսնում, Քրիզէիս և Նօթի բաժանւեցին Բօցարիսից և ճանապարհ ընկան դէպի Իտալիա։ Թշնամու դէմուդէմը փոխանակւած այս

հրաժեշտի ողջոյնները իրանց տխրութեամբ ու հանդիսաւորութեամբ չե՞ն յիշեցնում արդեօք Հեկտորի ու Անդրոմաքի հռչակաւոր և սրտաշարժ հրաժեշտը։

Փոքր ինչ յետոյ քաղաքի մէջ էլ ոչ ոք չմնաց մի քանի քահանայից և մի քանի հարիւր զինուորից զատ, որոնք մի ամսւայ պաշար ունէին։ Եթէ թիւրքերը այդ միջոցին մի յարձակում փորձէին, նրանք անտարակոյս մի քանի ժամւայ մէջ կը տիրէին Միսոլոնգիին, բայց նրանք չգիտէին բերդաքաղաքի իսկական վիճակը և բաւականանում էին միայն նրա պարիսպները հեռուից ռմբակոծելով։ Պաշարւածները ամեն տեսակ խորամանկութիւն բանեցրին իրանց թւի վերաբերմամբ թշնամուն խաբելու համար։ Ի միջի այլ վարպետութիւնների՝ նրանք որչափ կարելի է մեծ ժխորով զարնել էին տալիս այն մի քանի թմբուկը, որ նրանց ձեռքն էր ընկել։ Լսելով այդ գործիքի աղմուկը, որ հելլէնասէրների գալուց առաջ Յունաստանի մէջ չէր գործածւում, թիւրքերը երևակայեցին, թէ բազմաթիւ օտարականներ էին գտնւում քաղաքի պաշտպանների թւում։ Նրանց մոլորութիւնը այնքան մեծ էր, որ մի քանի օրից յետոյ Օմէր-Վրիօնէս առաջարկեց բանակցել։ Բօցարիս և Նախագահը գործը ձգձգելու այս առիթը ձեռքից բաց չթողին, սպասելով որևէ օգնութեան, որի գալուն, ըստ երևոյթին, թիւրքական նաւերի ներկայութիւնն էր միայն խանգարում։ Եւ իբր դրա հետևանք՝ Մարկը մի կողմից, Հագոս Բեսսիարիսը միւս կողմից, հանդիպեցին իրար՝ բանակցութիւն սկսելու, քաղաքից ատրճանակի մի ասպարէզի վրայ։ Երեք ապարդիւն տեսակցութիւնից յետոյ, որոնց միջոցներին անդադար գնդակահարում էին իրար, Բօցարիս հասկացաւ, որ անհրաժեշտ է գոնէ երեսանց համաձայնութեան գալ՝ օսմանեան զօրապետի համբերութիւնը ի չարը գործ չդնելու համար։ Բերանացի համաձայնութիւն կայացաւ երկու լիազօրների միջև, որով Նախագահը և իր մարդիկը, Բօցարիս և երեք հարիւր ընտանիք, ազատօրէն Պելոպոնէս պիտի հեռանային

իրանց ամբողջ գոյքով, որից յետոյ քաղաքի բանալիները պիտի յանձնէին փաշային։ Այս երեք հարիւր ընտանիքը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի ճարպիկ խաղ, մի խորուիլակ՝ թշնամուն իր սխալի և իր խաղաղասէր տրամադրութեան մէջ պահելու համար։ Մի շաբաթ ժամանակ տւին յոյներին նաւ նստելու և նեղուցը անցնելու համար։ Այդ ժամանակից ի վեր թշնամական յարաբերութիւնները դադարեցին։ Ճշմարտութիւնը ծայրայեղօրէն սիրելու պատճառով՝ Մարկը ինքն իրան մեղադրում էր իր արդարացի ռազմագիտական խորամանկութեան համար, որ նա հնարել էր մուսուլմանների աչքը վախեցնելու և իր բանակցութիւնները աջող ելքի հասցնելու նպատակով։ Միսոլոնգի մնալիս՝ նա ձեռքերով ճակատը ծածկեց և բացականչեց. „Ո՜հ, հայրենիք, որքա՜ն զոհողութիւնների պատճառ եղար դու ինձ համար։ Արդեօք պէտք էր այդ բոլորին աւելացնել նաև իմ պատիւը“։

Զինադադարի առաջին օրերը յոյների համար դառն տագնապների դուռ բաց արին։ Ժամերը անցնում էին և ակնկալւած օգնութիւնը չէր գալիս. կարծես թէ Յունաստանը մոռացութեան էր տւել Միսոլոնգին։

Վերջապէս չորրորդ օրը մի կատաղի քամի բարձրացաւ հարաւից և թիւրքական նաւերը հանեց իրանց անշարժութիւնից։ Միսոլոնգիի պաշտպանները ուրախութեան աղաղակներ արձակեցին, երբ նկատեցին, որ Պատրասից եօթը նաւ է գալիս և միևնոյն ժամանակ օսմանեան նաւերը փոթորկից կայմակոտոր եղած՝ Իթակէն ապաւինում։ Պաշարումը վերացւած էր, և հետևեալ օրը յունական նաւախումբը եօթը հարիւր մարդ իջեցրեց պաշարւած քաղաքը Պետրօ-բէյ Մաւրոմիխալիսի հրամանատարութեամբ։ Հետևեալ օրերը հազար հինգ հարիւր պելոպոնեսցի աւելացան սրանց թւին։ Այդ օրից ի վեր բերդաքաղաքը դիմադրելու ընդունակ էր։ Օմէր-Վրիօնէս այս բոլոր շարժումների սառնասիրտ ականատեսն էր եղել։ Նրան առանց դժւարութեան հաւատա-

ցրին, որ յունական փոքրիկ նաւատորմիղը մեկնել էր Պատրասից միայն նրա համար, որ տեղափոխի այն երեք հարիւր ընտանիքը, որոնց դաշնագրի զօրութեամբ թոյլատրուած էր Միսօլօնգիից հեռանալ: Պայմանաժամն էլ լրացած լինելով՝ նա մարդ ուղարկեց քաղաքի բանալիները խնդրելու: Բօցարիս ուղարկեց նրան Լէօնիդասի Թերմոպիլում տուած պատասխանը. „Եթէ կ'ուզես, եկ և առ“:

Մենք չենք պատմի ոչ Թիւրքերի գործած ապարդիւն յարձակումների մանրամասնութիւնները և ոչ էլ յոյների փայլուն սխրագործութիւնները: Օմէր՝ ուժով աջողելու յոյսը կտրած՝ դիմեց խորամանկութեան: Ծննդեան տօնը մօտենում էր: Ուրեմն հաւանական էր, որ յոյները, որոնց բարեպաշտութիւնը նախապաշարմունքի էր հասնում, կը մտասուզւէին աղօթքի մէջ և պատուարներից կը հեռանային, ժամերգութեանը ներկայ լինելու: Օմէր վճռեց օգտուել այդ հանգամանքից՝ սանդուղքներով գիշերային վերելք գործելու համար: Հէնց որ զանգի առաջին հարուածը հնչէր քաղաքում, մուսուլման զօրքերը զգուշութեամբ առաջ պիտի գնային, յարձակման փորձ անելու,— որը փաշայի արած հաշւի համեմատ ոչ դժւար էր և ոչ էլ վտանգաւոր,— և այդ քրիստոնեաներին պիտի կոտորէին իրանց տաճարներում: Բարեբախտաբար մի յոյն, որ Օմէր փաշայի անձնական ծառաներից էր, հէնց Ծննդեան նախընթաց օրը գաղտնի կերպով հաղորդեց Բօցարիսին այս ծրագրի մասին: Վերջնիս հրամանով բոլոր զանգերը կէս գիշերից մի ժամ առաջ ուժգին զօղանջեցին, և իւրաքանչիւր յոյն վազեց իր տեղը բռնելու: Թիւրքերը՝ համոզուած, որ յոյները այս կրօնական կոչին պատասխանելու վրայ են և որ նրանք զբաղուած են միայն Քրիստոսի ծննդեան տարեդարձը տօնելով, վստահութեամբ ճանապարհ ընկան, անցան խրամի գօտին ամենածանծաղ տեղով, պարսպին սանդուղքներ դրին, և ութ հարիւր հոգի բարձրացան յարձակում գործելու: Հազիւ էին նրանք վերջին աստիճանի վրայ ոտ դրել, երբ Բօցարիսի զինուորները, որ թագնուած էին պատնէշների ետևում, ոտի կանգնեցին, կրակ արին և գլորեցին յարձակւողներին: Հետևեալ գիշերը Օմէր-Բրիօնէսը՝ ամօթահար և վհատած, մի այնպիսի հապճեպով փախուստ տւեց, որ երբ յաղթողները միւս օրը մտան նրա թողած բանակատեղին, գտան այնտեղ տասը թնդանօթ, ռազմական կարգ ու սարք, պատւանշաններ և մինչև անգամ փաշայի զգեստները: Երկու յոյն միայն ընկան այս կռւում, իսկ Թիւրքերը կորցրին իրանց զօրքի ամենաընտիր մասը: Այս մեծ յաղթանակին նւիրուած երգը ասում է.

„Հրետաղնդները անձրևի պէս են թափւում, ռումբերը՝ ինչպէս կարկուտ, գնդակները՝ ինչպէս ծովի աւազը...

„Պատւենք այն երկիրը, որ Յունաստանի ծաղիկն է, աշխարհի փառքը, Ռումէլիայի բանալին, Մօրէայի սիւնը:

„Թիւրքերը երդւեցին Միսօլօնգիում ջրհեղեղ անել Ծննդեան օրը: Նրանք յետ մղւեցին:

„Նրանցից քանիսը այս յարձակման միջոցին ընկան, — ով կարող է հաշւել: Երկու պալիկար ընկան այս կռւում—Նիկօլաս Կաւկուրիս և Գէորգ Միգրուլիս:

„Նրանք հայրենիքի համար ընկան, ցնծացէք: Ազգի համար մեռնողները չեն կորչում, նրանք լաւ անուն են թողնում և փառքով մեկնում աշխարհից...“

Բօցարիսի հոգու արիութիւնը և արագ վճռականութիւնը ազատել էին Միսօլօնգին և Յունաստանը: Մաւրօկօրդատօ Պելօպօնէս վերադարձաւ, ուր կանչում էին նրան կառավարութեան հոգսերը: Նա թողեց Բօցարիսին արևմտեան Յունաստանի սպարապետութեան աստիճանագիրը: Լէօնիդասի գիւցազնական սերից հալածւած՝ երիտասարդ սպարապետը նրա նման տենչում էր մահ գտնել իր երկիրը փրկող յաղթանակի գրկում: 1823 թւի ամառւայ կիսին՝ Մուստային՝ Սկոդրայի փաշան, դուրս եկաւ Իլլիրիայից, որ Միսօլօնգիի վրայով Պելօպօնէս հասնի, գէգերից և տոսկիդներից

կազմւած զօրքի գլուխն անցած. սրանք Ալբանիայի ամենառազմիկ տարրերն են։ Պատմագիրները այս բանակի թիւը քառասուն հազարի են հասցնում։ Նրա առաջապահ զօրքը, որ բաղկացած էր տասնհինգ հազարից, օգոստոս ամսին անցաւ Թեսալիան և Ագրաֆա գաւառակը, ճանապարհին ամեն բան քանդելով ու հրդեհելով։ Մինչ այս մինչ այն, ցաւալի երկպառակութիւնները սպառնում էին ջլատել միսօլոնգիացիների փոքրիկ ոյժը։ Բօցարիսի սպարապետութիւնը շատերի նախանձն էր շարժել։ Նրա շուրջը հաւաքւած հարիւրապետները, որ սովոր էին իրանց լեռներում ինքնիշխան հրամաններ արձակել, տրամադիր չէին իրանցից աւելի երիտասարդ պետի հեղինակութիւնը ճանաչել։ Հելլէն ծերակոյտը ստիպւած եղաւ այս դժգոհներից շատերին սպարապետութեան աստիճանագիր ուղարկել։ Բօցարիս լռութիւն պահեց, որպէսզի տխուր վէճերի առիթ չտայ։ Այդ միջոցին սէրասկէր Մուստայու մօտենալու լուրն առան։ Բօցարիս հաւաքեց բոլոր հարիւրապետներին և ծոցից հանելով իր սպարապետութեան աստիճանագիրը, պատռեց ու գետին նետելով բացականչեց. „Թշնամուն է, որ պէտք է գնալ և խնդրել այս վկայագիրները։ Վաղը չէ միւս օր մենք կը տեսնենք՝ ովքեր ձեզանից արժանի են դրան“—և դուրս եկաւ քաղաքից չորս հարիւր պալլիկարով։ Հետևեալ օրը բոլոր զօրքերը միացան նրան։ Բօցարիսի ծրագիրն էր՝ կանգնեցնել թիւրքերին նախ քան նրանք կը հասնէին Միսօլոնգիի դաշտավայրը։

Բօցարիս մի թեթևաշարժ զօրաչու գործեց և Կարպենիցի գաւառակի սահմաններին հասաւ։ Յոյները ըղգուշութեամբ թագնւեցին անտառներում և թշնամուն միջոց տուին վրաններ կանգնելու։ Բօցարիս տեսաւ, որ անհնարին է յայտնապէս չափւել տասներկու կամ տասնհինգ հազար մարդու հետ, որ սէրասկէրի հրամանատարութեամբ առաջապահ զօրքն էր կազմում։ Նա իր զօրքին քսանչորս ժամ հանգիստ տւեց։ Միակ ինքն

էր, որ ընդհանուր յուզմունքի միջոցին պահպանում էր այն անդորրութիւնն ու սառնասրտութիւնը, որ մեծ ոգու մէջ ընկերանում են ամեն մի կորովի վճռի։ Դրա ապացոյցը կարելի է գտնել այն նամակում, որ Բօցարիս 1823 թւի օգոստոսի 18-ին, հէնց Կարպենիցիի կռւի օրը, ուղարկեց լորդ Բայրընին, որ պատրաստւում էր Միսօլոնգի գալ։

Բօցարիս գրում է.

„Ձեր և պատկառելի Իգնացիօի նամակները բերկրութեամբ լցրին իմ սիրտը։ Ձերդ գերազանցութիւնը այն իսկ անձնաւորութիւնն է, որի պահանջը մեզ զգում ենք։ Ոչ մի բան թողչարգիլ Ձեզ զալ Յունաստանի այս կողմը։ Բազմաթիւ թշնամին մեզ սպառնում է, բայց Աստծու և Ձերդ գերազանցութեան շնորհիւ նա պատշաճաւոր դիմադրութեան կը հանդիպի։ Այս երեկոյ ալբանական մի զօրագնդի դէմ կատարելիք ունիմ, որ մեզանից ոչ հեռու բանակ է դրել։ Վաղը չէ միւս օր մի քանի ընտիր մարդով Ձերդ գերազանցութեան ընդառաջ կըգամ։ Մի ուշանաք։ Շնորհակալ եմ այն լաւ կարծիքի համար, որ ունէք հայրենակիցներիս մասին և յուսով եմ, որ անհիմն չէք գտնի այն“։

Այս „կատարելիքը“ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ իր կեանքի զոհաբերութիւնը և իր հայրենիքի ազատութիւնը։ Այդ օրւայ իր մեծ մտազբաղումների միջոցին հերոսը մի քանի անգամ տրտմեց իր մօտալուտ մահուան առիթով։ Պատմում են, որ գիշերը հասնելուն պէս Բօցարիս մեկուսացաւ իւրայիններից քիչ հեռու և նստեց երաշանքների մէջ խորասուզւած։ Նրա ազգականը՝ Ցուսսաս, որ գաղտագողի հետևում էր նրան, վրայ հասաւ և տեսաւ արտասուք թափելիս, բայց չհամարձակւեց հարց ու փորձ անել։ Երբ Մարկը նկատեց նրան, ձեռքը մեկնեց. „Ո՜հ, ինչ դժւար է իմ պարտականութիւնը, ասաց նա. քեզ եմ յանձնում իմ կնոջը և երեխաներին“։

Յոյները արդէն Կարպենիցի հասնելու վրայ էին, երբ արևի ծագելուց մի քանի ժամ առաջ, անցան Սիլնցա գիւղակի միջից, որի բնակիչները դեռ քնի մէջ էին։ Մի անշուք մատուռի առջևով անցնելիս, Մարկը ներս

մտաւ իր հետևորդներից մի քանիսի հետ և սկսեց աղօթել։ Կանթեղները աղօտ լոյս էին սփռում սրբավայրի անարուեստ նկարներով զարդարուած պատերի վրայ. երկու քահանայ առաւօտեան ժամն էին ասում։ Երբ նրանք վերջացրին, Մարկը նրանցից մէկին առաջ գնաց և մի քանի ոսկի դրամ տալով՝ ասաց. „Ահաւասիկ այս ադքատներին կըտաս, աղօթիր Բօցարիսի հոգու համար“։

„Ասուած իմ, միթէ նա մեռած է, բացագանչեց քահանան, որ նրան ճանաչում էր միայն նրա սխրագործութիւնների հռչակը լսելով։— Ոչ, պատասխանեց Բօցարիս, նա մեռնելու է գնում։

18-ի առաւօտը Մարկը յարձակման վերաբերեալ պատէրներ տուեց, որը որոշուած էր հետևեալ գիշերուայ համար։ Օրուայ ընթացքում Կիցոս Ցաուելլաս, արի և հաւատարիմ ադարնանիացի Կարայիսկոս, Զոնգոս, Մակրիս Պլոկապարի սարից մէկ-մէկ անցան Կալլիտրոմի անտառները, երկար շրջաններ գործելով թշնամուց անկատելի մնալու համար։ Նրանք հրաման էին ստացել աստիճանաձև կարգեր կազմել թիւրքերի երկու թևի վրայ և անշարժ մնալ մինչև որ Բօցարիս ազդանշան կըտար։ Բօցարիս միայն երեք հարիւր մարդ պահեց իր համար։ Նրա դիտաւորութիւնն էր՝ մտնել բանակը, գիմել ուղղակի սերասկէրի վրանը և սպանել նրան՝ մինչ իր զինակիցները շփոթութիւն և ահուդող կը սփռէին ամենուրեք։ Եւ անմիջապէս օգնութեան կանչելով շրջակայ անտառներում դարան մտած հարիւրապետներին, նա յոյս ունէր հեշտութեամբ յաղթել շփոթուած և առաջնորդից զրկուած զօրքը։ Գիշերը վրայ հասած լինելով՝ նա ճանապարհ ընկաւ։ Մի վայրկենաչափ վրանում՝ տիրեց իր փոքրիկ զօրքի կարգերում։ „Դուք բոլորդ էլ ազատ էք մնալ. ինչ վերաբերում է ինձ, ես գնում եմ“։ Եւ նա աւելացրեց այս գեղեցիկ խօսքը, որ հռչակաւոր ու ժողովրդական է մնացել Յունաստանում. „Եթէ խառնակութեան միջոցին ինձ կորցնէք, վազեցէք փաշայի վրանը, այնտեղ կը գտնէք ինձ“։ Էլեկտրականացած այս պերճախօս ու լակոնական խօսքերից, երեք հարիւր պալլիկարները թրերը հանեցին և պատեանները հեռու գցեցին, դրանով ցոյց տալով, որ նրանք մտածում են միայն կամ յաղթել կամ մեռնել, և ապա միմեանց խաղաղութեան համբոյր տուին իրանց սովորութեան համեմատ։

Բանաստեղծները և յունական պատմագիրները կարպենիցին թերմոպիլին են համեմատում, իսկ Բօցարիսի երեք հարիւր մարդը՝ Լեոնիդասի երեք հարիւր սպարտացիներին։ Փաստերը արդարացնում են այս համեմատութիւնը։

Մարկ և իր զօրքը կէս գիշերուայ մօտ հասան մուսուլման առաջապահեսներին։ Պահակներին ալբաներէն խօսած լինելով՝ նրանց ընդունեցին Օմէր-Բրիոնէսից ուղարկուած օժանդակ զօրքի տեղ։ Այս վարպետութեան շնորհիւ՝ նրանք առանց արգելքի բանակը մտան, ուր ամենակատարեալ ապահովութիւն էր տիրում։ Խոր քուն մտած թիւրքերը յոյների առաջին զոհերի աղաղակներից զարթեցին։ Բոլոր կողմերից նրանք զէնքի դիմեցին, զուր տեղը ջանալով խաւարի գրկում գուշակել՝ թէ ինչ տեսակ թշնամու հետ գործ ունեն։ Զօրավարները կարծեցին, որ զօրքի մէջ խռովութիւն է ծագել.—այնքան հեռու էր նրանցից մի այդպիսի յարձակման միտքը. Նրանք խռովութիւնը հանգստացնելու մասին էին մտածում։ Միայն Ջելէլէդդին-բէյը, Մուստայու փոխանորդը, Բօցարիսին ճանաչեց։ Հազիւ էր նա բերանը բաց արել իւրայինների մոլորութիւնը ցրելու համար, երբ մի սուլիացի նրա կուրծքը կոխեց իր թուրը։ Խառնակութիւնից և ընդհանուր շփոթութիւնից օգտուելով՝ յոյները աջ և ձախ հարուածներ էին հասցնում։ Շատ չանցած գէգերն ու տոկսիդները կրակ արին միմեանց վրայ։ Այդ միջոցին Բօցարիս՝ ահաբեկուած զինուորների խմբերի միջով էր անցնում և երբեմն միայն կանգ առնում՝ ալբաներէն խնդրում, որ իրան ցոյց տան սերասկէրի վրանը։

Այդ կերպով նա սխալմամբ Հագոս Բեսսիարիսի վրանը մտաւ, որ մի ժամանակ դաւաճանել էր սուլիացիներին և որ այդ գիշեր իր կեանքի գնով քաւեց իր դաւաճանութիւնը։ Պատմում են, որ Մարկը թիւրք գլխաւոր զօրավարներից եօթին սպանեց իր ձեռքով։ Ճակատագիրը, կարծես, ուզում էր ազատել իր փնտրած զոհին։ Ժամանակն անցնում էր. լուսանում էր, և Բօցարիս նկատեց, որ մի մեծ տարածութիւն բաժանում էր Նրան իր գնդից։ Նա մտածեց, որ արդէն ժամանակ է սարում դարան մտած հարիւրապետներին օգնութեան կանչել և միևնոյն ժամանակ թշնամու ուշադրութիւնը միմիայն իր վրայ հրաւիրել, որպէսզի կարողանայ ազատել պալլիկարներին, որոնց զրութիւնը շատ վտանգաւոր էր։ Նա փչեց իր փողը։ Այս հնչուն ու թրթռուն ձայնը լսելով, որ մի վայրկենաչափ խլացրեց խառնաշփոթ աղաղակները, ալբանացիները ապուշ կտրեցին զարմանքից և վերջապէս սարսափով գուշակեցին՝ թէ ինչ ահարկու թշնամու հետ գործ ունէին։ ապա բաղմութեամբ Բօցարիսի կողմը նետուելով պարպեցին իրանց զարաբինաները նրա ուղղութեամբ, առանց իմանալու թէ ինչ էին անում։ Մինչ կռիւը ալբանացիների ուշադրութիւնն էր կլանում, Կիցոս Ցաւելլաս և միւսները պատասխանում էին իրանց պետի հրաւէրին և սրարշաւ իջնում Կալլիդրօմի ցից զառիվայրը։ Քիչ յետոյ Նրանք արդէն մասնակցում էին կռիւն։ Մարկը տեսնելով, որ թշնամի ամբոխը խտանում է իր շուրջը, կրկին վազ տուեց՝ յանձն առած գործը գլուխ բերելու։ Երբ վազում էր դէպի մի մեծ դրօշաղարդ վրան, որ նա ընդունել էր սէրասկէրի վրանի տեղ, նա վիրաւորուեց փորից։ Ցաւ չզգալով, նա մի քանի քայլ ևս արեց. բայց քիչ յետոյ թուլացած արեան կորստից, որ առատօրէն հոսում էր վէրքից, ստիպուեց ծնկի գալ, չընկնելու համար։ „Դէպի ինձ, դէպի ինձ, բարեկամներս,“ բացագանչեց. նա զգում էր, որ մահացու վէրք է ստացել. ուժաթափ էր լինում։ Արևը ծագում էր։ Հայեացքը

իր չորս կողմը յածելով, Բօցարիս կարողացաւ տեսնել իր անպարտելի զինուորներին մոլեգնաբար թշնամուն հալածելիս, որ սկսել էր փախուստ տալ։ Այդ միջոցին Նրան մօտեցաւ իր Կոստանդին եղբայրը, որ կռուի ըսկզբից Նրան էր փնտրում։ Վերջինս գտնելով Նրան մի այդպիսի ողբալի վիճակում, ի զուր ջանաց համոզել, որ հեռանայ կռուի դաշտից։ Մարկը մերժեց. նա կամեցաւ մինչև վերջին ժամը իր յաղթանակի տեսարանը վայելել, գուցէ նա դեռ կռուին մասնակցելու յոյս ունէր, որովհետև իր զինակիցներից շատերը վրայ հասած լինելով, նրա վերքը շտապով կապել էին։ Նրա ծայրայեղ թուլութիւնը, կարծես, չքանում էր։ Արդէն նա իր զարաբինան կրկին լեցնելու վրայ էր, երբ մի երկրորդ գնդակ ջախջախեց Նրա գլուխը։ Ընկաւ Բօցարիս, որ այլ ևս կրկին չվերկենայ, հաղիւ երեսունհինգ տարեկան հասակում։ Նրա զինուորները քինախնդրութեամբ լցուած՝ գրեթէ գերբնական զօրութեամբ օժտուեցին և սրի տուին սէրասկէրի բանակը, որ ստիպուած եղաւ թեսալիայի բարձրութիւնները ապաւինել։

Յաղթողները անմիջապէս ճանապարհ ընկան դէպի Միսօլօնգի, մոռանալով իրանց յաղթանակը և մտածելով միայն իրանց անփոխարինելի կորստի մասին։ Նրանք տարան Բօցարիսի մարմինը՝ պառկեցրած մի պատգարակի վրայ և ծածկուած թշնամուց խլուած զրօշակներով։ Մի տարօրինակ զուգադիպութեամբ այս տխուր թափօրը կանգ առաւ Սիլիցայում և յոյները իրանց թանկագին բեռը դրեցին նոյն այն սրբավայրում, ուր Մարկը աղօթել էր մի քանի օր առաջ։ Միսօլօնգիի մօտ նրանց ընդառաջ գուրս եկաւ մի հոծ բազմութիւն, որ խուժել էր շրջակայքից և Պելօպոնէսից։ Յուղարկաւորի անցնելու միջոցին ամբոխը ծաղիկներ էր սփռում և ծունր դնում՝ հանգուցեալի համար տեղնուտեղը յօրինուած սրտայոյզ երգեր երգելով։ Այս հերոսական մահուան լուրը մեծ ցաւ պատճառեց ամենքին և նկատուեց որպէս հասարակական աղէտ։

Մի բանաստեղծ վերջացնելով Կարպենիցիի ճակատամարտի նկարագրութիւնը՝ Բօցարիսի բերանն է դնում հետեւեալ խօսքերը. „Կոստանդին, եղբայր-ջան, կախը չգոտարկեցնես. սուլիացիներ, շողեք իմ վրայ, այլ գրեցէք իմ կնոջը, իմ դժբախտ կնոջը, որ փրանկների աշխարհումն է, Անկօնում, գրեցէք նրան, որ մտածէ միայն մեր երեխաների մասին“։

Քրիզէիսի հեզ և տխուր պատկերը մնում է որպէս լուռ անձնուիրութեան, անյայտ զոհաբերութիւնների, գաղտնի տանջանքների մի սրտաշարժ խորհրդանշան՝ իր քաջասիրտ ամուսնու փառքի և մեծ քաջագործութիւնների կողքին։

Գնդապետ Գամբան պատմում է, որ Բայրըն՝ իմանալով Բօցարիսի մահը, որին նա մտադիր էր մի ամբողջ քերթուած նուիրել և որի մի քանի անընթեռնլի կտորներն են միայն մնացել, առատ արտասուք թափեց։ Շուտով Բայրըն եւս իր կեանքը զոհեց յունական անկախութեան գործին և Միսօլօնգիի բնակիչները մինչև այսօր էլ հպարտութեամբ ցոյց են տալիս այն համեստ բնակարանը, ուր հռչակաւոր օտարականը իր վերջին շունչը փչեց։ Ինչո՞ւ չթողին, որ զինուոր դարձած բանաստեղծի աճիւնը հանգչի այն հերոսի կողքին, որի զինակիցն էր նա ուզում լինել։ Այդ վսեմ աճիւնը Յունաստանին էր պատկանում։ Բօցարիս և Բայրըն անբաժան պիտի մնային։ Այդ երկու մեծ դամբանները, մէկը միւսին վկայական հմայք տալով, պիտի մնային յետնորդների աչքում որպէս մի խիստ և բանաստեղծական խորհրդանշան,—մի խորհրդանշան այն աներևոյթ զօրութեան, որ յափշտակեց հանճարին և տարաւ նրան դէպի հերոսութիւն։

ԹԷՏԵԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
„ԱԳԱՐԱ“

PUBLICATIONS
DE
l'Union des Etudiants Arméniens de l'Europe.

En français :

1) Ed. Bernstein. **Les souffrances du Peuple arménien et le devoir de l'Europe** . . . Fr. 0.40
2) Alb. Vandal. **Les Arméniens et la Réforme de la Turquie** . . . » 0.20
3) Francis de Pressensé. **L'Arménie et la Macédoine** . . . » 0.40
4) Georges Brandès. **L'Arménie et l'Europe** . . . » 0.40

En allemand :

5) Ed. Bernstein. **Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas** . . . » 0.50
6) D'Estournelle de Constant ; Denys Cochin ; Francis de Pressensé ; Jean Jaurès ; Paul Lerolle ; Anatole Leroy-Beaulieu : **Für Armenien und Macedonien.** . . . » 0.60
7) Georg Brandès. **Armenien und Europa** . . . » 0.40
8) Ilse Frapan. **Die armenische Frage.** . . . » 0.40

En arménien :

(Voir la liste ci-contre)

Հայաստանի Ազգային գրադարան
NL0425643

17718

ԱԶԱՏ ԳՐԱԳԱՐԱՆ

Խմբագրութեամբ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՈՐ ԿՈՄԻՏԷԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

	գին, սանտ
1) ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ	20
2) ԱՊՍՏԱՄԲ ՍԱՍՈՒՆՔ	20
3) ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ ՏԱՂԵՐԸ	20
4) ՀԱՅՈՒՀԻՆԵԲԻՆ	20
5) ՀԵՐՈՍԸ	20
6) ԼԵՌԱՆ ՌԱԶՄԻԿԸ	20
7) ՄԱՐԿ ԲՕՅԱՐԻՍ	20

(Պատրաստուած են այլ գրքեր)

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷԶԸ. Հայատառ. (չուտով կը վաճառուի)

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ.

(Տես նախորդ երեսը)

Adresse : *Union des Etudiants Arméniens de l'Europe,*
rue de l'Ecole-de-Chimie, 2, **Genève** (Suisse)